# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 դեկտեմբերի 2022թ. թիվ 836-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) Լոռու մարզային վարչության հետ համատեղ կազմված աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 01.12.2022թ. թիվ ԳՍ/15.2/32582-2022 հանձնարարականը՝

Ո ր ո շ ու մ  եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2023թ. հունվարի 1-18-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին առաջարկել՝

1) Մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը կազմել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովներ՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

2) Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2023թ. հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն և ՀՀ վիճակագրական կոմիտեի Լոռու մարզային վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա. Թումանյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

01/12/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 1
ք.Վանաձոր